

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԾՐԱԳԻՐ

EGPS ԴՐԱՄԱՇՆՈՐՀ No. TFOB4808

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2021թ. հունիսի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՁԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ.ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԾՐԱԳԻՐ

EGPS ԴՐԱՄԱՇՆՈՐՀ No. TFOB4808

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ 3

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 4-6

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ
2021թ. հունիսի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվություն 7

Ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվություն 8

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 9-18

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի (Վարչապետի աշխատակազմ) ղեկավարությունը պատասխանատու է EGPS No. TFOB4808 Դրամաշնորհային Համաձայնագրով (Նամակ-Համաձայնագիր) ֆինանսավորվող «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն. լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որը ճշմարիտ է ներկայացնում 2021թ. հունիսի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվությունը, ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման բաղաբականության ամփոփը և այլ ծանոթագրությունները, ինչպես նաև ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործումը՝ համաձայն Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների հորիզոնի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված, «Ֆինանսական հաշվետվություն դրամական հաշվառման հիմունքներով»:


Հատուկ նպատակներով ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարությունը պատասխանատու է.


- Հաշվապահական հաշվառման բաղաբականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Ներկայացնել տեղեկատվությունը, ներառյալ հաշվապահական հաշվառման բաղաբականությունը, այնպես որ այն լինի արժանահավատ, համադրելի ու հասկանալի,
- Ներկայացնել լրացուցիչ անհրաժեշտ տեղեկատվություն 2021թ. հունիսի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարությունն նաև պատասխանատու է.

- Մշակելու, ներդնելու ու պահպանելու ներքին հսկողության արդյունավետ համակարգ,
- Կատարելու հաշվապահական հաշվառման պատշաճ գրանցումներ, որոնք բավարար են ներկայացնելու ու պարզաբանելու գործարքները, և որոնք հնարավորություն են տալիս հիմնավորել, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով» ՀՀՀՄ ստանդարտի և ՎՁՄԲ ուղեցույցի,
- Ձեռնարկել հնարավոր միջոցներ Ծրագրի ակտիվների պահպանման նպատակով, և ապահովել, որ ֆոնդերն օգտագործվել են Վարկային Համաձայնագրում նշված պայմաններին և ՎՁՄԲ համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են, և
- Կանխարգելել և բացահայտել խարդախությունը կամ այլ սխալները:

2021թ. հունիսի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի ավարտված տարվա հատուկ նպատակների ծրագրի ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարության կողմից 2025թ. ապրիլի 18-ին:


Արմենակ Խաչատրյան
ՀՀ վարչապետի աշխատակազմի
ղեկավարի տեղակալ


Հասմիկ Մանուկյան
Արդյունահանող ճյուղերի թափանցիկության
նախաձեռնության (ԱՃԹՆ)
բարոտուղարության ղեկավար

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել 2021թ. ապրիլի 19-ին կնքված EGPS No. TFOB4808 Դրամաշնորհային Համաձայնագրով (Նամակ-Համաձայնագիր) ֆինանսավորվող և ՀՀ վարչապետի աշխատակազմի (Վարչապետի աշխատակազմ) կողմից իրականացվող «Հայաստանի արդյունախանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն. լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2021թ. հունիսի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվությունը, ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով, Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2021թ. հունիսի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի դրամական միջոցների ստացումները և վճարումները՝ համաձայն «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (ՀՀՀՀՄՍ-դրամարկղային սկզբունք):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» պարբերությունում:

Մենք անկախ ենք Ծրագրից և Վարչապետի աշխատակազմից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում – Դրամարկղային միջոցների սկզբունքով հաշվետվությունների պարորաստում

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ին, որտեղ ներկայացված է, որ այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են դրամարկղային միջոցների սկզբունքով, որի պատճառով, այս հաշվետվությունները կարող են չհամապատասխանել այլ նպատակներով օգտագործման համար:

Հանգամանքի շեշտադրում – Ծրագրի ավարտ և բյուջեի կարարողական

Առանց ձևափոխելու մեր կարծիքը՝ Ձեր ուշադրությունն ենք հրավիրում հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվություններին կից 8-րդ և 9-րդ ծանոթագրությունները, որոնք բացահայտում են, որ Ծրագիրը հաշվետվությունների ներկայացման ամսաթվի դրությամբ ավարտվել է մասամբ:

Ղեկավարության պատասխանարվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Վարչապետի աշխատակազմը պատասխանատու է Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (<<<<ՄՍԽ) կողմից հրապարակված “<<<<ՄՍ-դրամարկղային սկզբունք” ստանդարտի և Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Ձեռնարկի (<Բ ուղեցույց) համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Աուդիտորի պատասխանարվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ դրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Նամակ-համաձայնագրի պահանջների պահպանման նպատակով Վարչապետի աշխատակազմը պետք է ապահովի, որ.

1. Ֆոնդերն օգտագործվել են Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎՀՄԲ) միջև կնքված Նամակ-համաձայնագրում նշված պայմաններին և Համաշխարհային բանկի համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
2. Ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Փոխհատուցման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն Նամակ-համաձայնագրի: Ծրագրի կողմից հաշվետու ժամանակաշրջանների վերաբերյալ ներկայացված Միջանկյալ Ֆինանսական Հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական գրանցումներին:
3. Նպատակային հաշիվը վարվել է համաձայն Նամակ-համաձայնագրի պայմանների և Համաշխարհային բանկի համապատասխան ուղեցույցների:
4. Ֆինանսավորվող ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվել համաձայն Նամակ-համաձայնագրի պայմանների և Համաշխարհային բանկի համապատասխան ուղեցույցների:

Մեր կարծիքով, 2021թ. հունիսի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի ընթացքում Վարչապետի աշխատակազմը պահպանել է նշված պահանջները:

“Բի-Դի-Օ Արմենիա” ՓԲԸ
18 ապրիլի, 2025թ.

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

“Հայաստանի արդյունաբերական ճյուղերի թափանցիկության նախաձեռնության աջակցություն. լրացուցիչ ֆինանսավորում” ծրագիր
 Դրամաշնորհ No. TFOB4808
 Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվություն
 2021թ. նոյեմբերի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
 (ԱՄՆ դոլար)

	Փաստացի	Փաստացի			Նախատեսված	Շեղում
		ժամանակաշրջանի ավարտը 31 դեկտեմբեր 2022	31 դեկտեմբեր 2023-ի դրությամբ	31 դեկտեմբեր 2024-ի դրությամբ	Անդրական առ 31 դեկտեմբերի 2024	Անդրական առ 31 դեկտեմբերի 2024
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ						
Նպատակային հաշիվ (Դրամաշնորհ TFOB4808)		-	59,210.38	-		
Ծրագրի հաշիվ (<< Կատակարություն)		-	59,210.38	15,946.37		
Ընդամենը				15,946.37		
Ավելացել						
Ֆոնդերի արդյունքները						
Դրամաշնորհ TFOB4808		16,407.35	9,200.95	14,064.77	39,673.08	
<< Կատակարության համաֆինանսավորում		145,316.71	-	100,597.76	245,914.47	
Ընդամենը	7	161,724.06	9,200.95	114,662.53	285,587.55	
Արտաբյուջային օգուտ / (կորուստ)						
<< Կատակարության համաֆինանսավորում		780.15	(4.13)	1,076.09	1,852.10	
Ֆոնդերի օգտագործում						
1. Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր ծրագրի շրջանակներում						
Դրամաշնորհ TFOB4808		17,187.50	9,196.82	15,140.86	41,525.18	65,674.82
<< Կատակարության համաֆինանսավորում		86,106.33	43,264.01	88,351.04	217,721.38	282,278.62
Ընդամենը ծրագրային ծախսեր	8	103,293.83	52,460.83	103,491.90	259,246.56	347,953.44
Դրամական միջոցների վերջնական մնացորդ						
Նպատակային հաշիվ (Դրամաշնորհ TFOB4808)		59,210.38	15,946.37	28,193.09	28,193.09	
Ծրագրի հաշիվ (<< Կատակարություն)		59,210.38	15,946.37	28,193.09	28,193.09	
Ընդամենը	6					

Արմենակ Խաչատրյան

Հասմիկ Մանուկյան

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության
նախաձեռնության (ԱՆԾՆ)
քառուսուղարության ղեկավար

18 ապրիլի, 2025թ.
 Ծանոթագրությունների 8-17 էջերը կազմում են այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

“Հայաստանի արդյունաբանող ձյուղերի թափանցիկության նախաձեռնության աջակցություն . լրացուցիչ ֆինանսավորում” ծրագիր
 Դրամաշնորհ No. TFOB4808
 Ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվություն
 2021թ. նոյեմբերի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
 (ԱՄՆ դոլար)

	Փաստացի				Նախատեսված	Շեղում
	Ժամանակաշրջանի ավարտը 31 դեկտեմբեր 2022	31 դեկտեմբեր 2023-ի դրությամբ	31 դեկտեմբեր 2024-ի դրությամբ	Անողական առ 31 դեկտեմբերի 2024	Անողական առ 31 դեկտեմբերի 2024	Անողական առ 31 դեկտեմբերի 2024
Բաղադրիչ 1. Էլեկտրոնային աշխատանքային փոխանակման հարթակի նախագծում, նշակում և իրականացում	69,856.88	15,630.23	59,575.46	145,062.57	348,000.00	202,937.43
ՀՀ Կառավարության համաֆինանսավորում	11,633.02	2,605.04	9,931.16	24,169.22	58,000.00	33,830.78
Դրամաշնորհ TFOB4808	58,223.86	13,025.19	49,644.30	120,893.35	290,000.00	169,106.65
Բաղադրիչ 2. Տեխնիկական միջոցներով ապահովում	6,392.26	14,368.84	18,201.06	38,962.16	99,000.00	60,037.84
ՀՀ Կառավարության համաֆինանսավորում	1,065.38	2,552.13	1,610.34	5,227.85	19,000.00	13,772.15
Դրամաշնորհ TFOB4808	5,326.88	11,816.71	16,590.72	33,734.31	80,000.00	46,265.69
Բաղադրիչ 3. Հանրության իրազեկում Էլեկտրոնային աշխատանքային փոխանակման հարթակի մասին	27,044.70	22,461.76	25,715.37	75,221.83	160,200.00	84,978.17
ՀՀ Կառավարության համաֆինանսավորում	4,489.11	4,039.65	3,599.35	12,128.11	30,200.00	18,071.89
Դրամաշնորհ TFOB4808	22,555.59	18,422.11	22,116.02	63,093.72	130,000.00	66,906.28
Ընդամենը ծրագրային ծախսեր	103,293.83	52,460.83	103,491.90	259,246.56	607,200.00	347,953.44



Արմենակ Խաչատրյան



Հասմիկ Մանուկյան

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՆԾՆ) քարտուղարության ղեկավար

“Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն.
լրացուցիչ ֆինանսավորում” ծրագիր

Դրամաշնորհ No. TFOB4808

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. հունիսի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Ծրագիր

2021թ. ապրիլի 19-ին Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) միջև ստորագրվել է ֆինանսավորման համաձայնագիր, համաձայն որի ՎԶՄԲ-ն ՀՀ-ին է տրամադրել No. TFOB4808 Դրամաշնորհ՝ 500,000 ԱՄՆ դոլար գումարով:

Դրամաշնորհային համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2021թ. ապրիլի 19-ին:

Դրամաշնորհը տրամադրվել է «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն. լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի (Ծրագիր) իրականացման համար:

Դրամաշնորհային նամակ-համաձայնագրով Ծրագրի ավարտման վերջնաժամկետ է սահմանվել 2024թ. մարտի 31-ը: Համաձայն 2023 թվականի դեկտեմբերի 20 -ի նամակի՝ ՀԲ-ն Ծրագրի ավարտը երկարաձեց մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը: Փոխհատուցման դիմումների ներկայացման արտոնյալ ժամանակաշրջանը Ծրագրի ավարտից հետո չորս ամիս է:

Ծրագրի զարգացման նպատակն էր աջակցել Հայաստանի Հանրապետությանը՝ հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկության և հաշվետվողականության մակարդակի բարձրացմանը՝ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) Ստանդարտի իրականացմամբ:

2022-2024 թվականներին իրականացվել են մի շարք կարողությունների զարգացման նախաձեռնություններ՝ ուժեղացնելու համար ԱՃԹՆ գործընթացում ներգրավված շահառուների հմտություններն ու գիտելիքները: Կազմակերպվել են սեմինարներ և վերապատրաստումներ՝ նվիրված ԱՃԹՆ Ստանդարտին և հաշվետվողականության պահանջներին՝ պետական ծառայողների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և հանքարդյունաբերության ոլորտի ներկայացուցիչների համար: Մշակվել և հանրությանը ներկայացվել են 2020-2021 և 2022 թվականների ԱՃԹՆ ազգային զեկույցները:

Այս աշխատանքի արդյունքում ԱՃԹՆ-ի միջազգային Խորհուրդը Հայաստանի երկրորդ վավերացման արդյունքում կայացրել է հետևյալ որոշումը. «Հայաստանը ստացել է բարձր՝ 89.5 միավոր ընդհանուր գնահատական՝ 2019 թվականի ԱՃԹՆ Ստանդարտի կիրառման համար: Ընդհանուր միավորը հաշվարկվել է երեք բաղադրիչների միջինով՝ Շահառուների ներգրավվածություն, Թափանցիկություն և Արդյունքներ ու ազդեցություն: Վավերացման գնահատման համաձայն՝ Հայաստանը գերազանցել է մեկ պահանջ, ամբողջությամբ իրականացրել՝ 24, և մեծամասամբ իրականացրել՝ երկու»:

Բազմաշահառու խմբի (ԲՇԽ) պարբերաբար կայացող նիստերը կարևոր դեր են խաղացել՝ մտահոգությունները քննարկելու, առաջընթացը ներկայացնելու և ապագա առաջնահերթություններ սահմանելու գործում: Ծրագրի աջակցությունը խթանել է

համատեղ աշխատանքն ու համագործակցային մոտեցումը՝ հանքարդյունաբերական ոլորտի խնդիրների լուծման գործում: Կառավարությունը վերահաստատել է իր հանձնառությունը ԱՃԹՆ Ստանդարտի պահանջների ներդրումն ապահովելու գործում և կարևորել համակարգված տվյալների բացահայտման հարթակի ներդրումը Հայաստանում:

1.2. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ-ին՝ բարձրացնել հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ կիրառելով Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) ստանդարտը:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

Բաղադրիչ 1. ԱՃԹՆ Հաշվետվություն և վավերացում

ա) Երկու ԱՃԹՆ զեկույցների հրապարակում՝ համաձայն ԱՃԹՆ 2019 Ստանդարտի և համակարգված տվյալների բացահայտման մոտեցման ներառմամբ:

բ) Համակարգված տվյալների բացահայտում և հիմնական հոսքերում ներառում՝ տեղեկատվական տեխնոլոգիական պորտալի ստեղծման, ծրագրային ապահովման մշակման և ոլորտին առնչվող գծային նախարարությունների ու այլ պետական հաստատությունների կայքերի արդիականացման միջոցով:

գ) Աջակցություն՝ ուղղիչ գործողությունների և օրենսդրական առաջարկությունների իրականացմանը՝ հիմնված առաջին վավերացման հաշվետվության և ԱՃԹՆ զեկույցների վրա, ինչպես նաև համակարգված բացահայտումների համար իրավական հիմքի ձևավորում:

Բաղադրիչ 2. Կարողությունների զարգացում և ներդրում

ա) Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման աջակցություն՝ մասնակցող շահառուների և ակադեմիական շրջանակների համար, որպեսզի կարողանան օգտագործել ԱՃԹՆ տվյալները որոշումների կայացման գործընթացներում, մասնավորապես՝ ազդակիր համայնքներում արդյունավետ հանրային մասնակցություն ապահովելու, կայուն զարգացման ծրագրեր և քաղաքականություններ մշակելու, ԱՃԹՆ գործընթացի միջոցով բացահայտված իրավական հակասությունները վերացնելու, ինչպես նաև ԱՃԹՆ-ի համատեքստային տվյալների ժամանակին պատրաստման և հրապարակման գործընթացը ինստիտուցիոնալացնելու համար:

բ) Հանքարդյունաբերական ոլորտի սոցիալ-տնտեսական և բնապահպանական ազդեցությունների վերաբերյալ համայնքներում հանրային մասնակցության ուժեղացում:

Բաղադրիչ 3. Հաղորդակցություն և իրազեկում

ա) Տարածման արշավների և իրազեկման միջոցառումների ռազմավարության իրականացում՝ ԱՃԹՆ Ստանդարտի իրականացումը խթանելու նպատակով, ներառյալ՝

“Հայաստանի արդյունաբերական ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն.
լրացուցիչ ֆինանսավորում” ծրագիր

Դրամաշնորհ No. TFOB4808

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. հունիսի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

համաժողովներ, կառավարման խորհրդի նիստեր, հրապարակումներ, տեսանյութեր,
ինչպես նաև ինտերնետային և սոցիալական մեդիայի ակտիվություններ:

բ) Թեմատիկ վերլուծությունների և ոլորտային ակադեմիական հետազոտությունների
հրապարակմանը նվիրված միջոցառումների կազմակերպում:

գ) Շարունակական խորհրդակցությունների և քննարկումների աջակցում՝ ոլորտի հետ
կապված հարցերի շուրջ, մասնակցող որոշում կայացնողների և շահառուների հետ:

1.3. Ծրագրի բյուջե և ֆինանսավորում

Ծրագիրը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից.

- No. TFOB4808 Դրամաշնորհ-100% առանց հարկերի,
- Հայաստանի Հանրապետության կառավարություն (<< կառավարություն)-հարկեր

Կատեգորիա	Դրամաշնորհ No. TFOB4808	<< կառավարություն	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
1. Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր ծրագրի շրջանակներում	500,000.00	107,200.00	607,200.00
Ընդամենը	500,000.00	107,200.00	607,200.00

1.4. Ծրագրի իրականացում

Ծրագիրը իրականացվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի
աշխատակազմի (Աշխատակազմ) կողմից:

Աշխատակազմի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 10, Կառավարական տուն 1:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

2.1. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են
Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների
խորհրդի (<<<<ՄՍԽ) կողմից հրապարակված Ֆինանսական հաշվետվություններ
հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով Հանրային Ոլորտի
Հաշվապահական Հաշվառման Ստանդարտի համաձայն, և ներկայացվել են
Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների
Ֆինանսական Ձեռնարկին՝ RM 3-Ֆինանսական Հաշվետվողականություն և Աուդիտ-ին
(մարտ, 2010) համապատասխան:

“Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն. լրացուցիչ ֆինանսավորում” ծրագիր

Դրամաշնորհ No. TFOB4808

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. հունիսի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները ներառում են.

- դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվությունը,
- ըստ ծրագրի բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը,
- հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն ներկայացված ժամանակաշրջանների համար:

2.2 Հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունք

Ծրագրի ֆինանսավորումը ճանաչվում է դրամական միջոցների ստացման պահին: Ծրագրի ծախսումները ճանաչվում են որպես Ծրագրի ծախսեր դրանց վճարման պահին:

2.3 Ներկայացման արժույթը

ՀՀ կառավարության ներդրումները և ՀՀ կառավարության ֆինանսավորմամբ տեղական արժույթով (հայկական դրամ - ՀՀ դրամ) կատարված ծախսերը փոխարկվել են ԱՄՆ դոլարի՝ ըստ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) սահմանած միջին փոխարժեքի՝ գործարքի օրվա դրությամբ:

ՎԶՄԲ-ի ֆինանսավորմամբ տեղական արժույթով (հայկական դրամ - ՀՀ դրամ) կատարված ծախսերը փոխարկվել են ԱՄՆ դոլարի՝ ըստ ՀՀ գանձապետարանի համար Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից սահմանված գործարքի օրվա դրությամբ ԱՄՆ դոլարի գնման փոխարժեքի:

Տեղական արժույթով ստացված և հետո ծախսված կանխիկ միջոցների վրա փոխարժեքի փոփոխության ազդեցությունը ցուցադրվում է որպես առանձին տող՝ կանխիկ մուտքերի և ելքերի հաշվետվությունում: Տեղական արժույթով պահվող կանխիկ միջոցների, դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների վրա փոխարժեքի փոփոխության ազդեցությունը ցուցադրվում է որպես առանձին տող՝ ֆինանսական վիճակի հաշվետվությունում:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար=396.56 դրամ:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար=404.79 դրամ:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար=393.57 դրամ:

2021թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար=480,14 դրամ:

2.4. Հարկեր

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

“Հայաստանի արդյունաբերող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն. լրացուցիչ ֆինանսավորում” ծրագիր
 Դրամաշնորհ No. TFOB4808
 Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
 2021թ. հունիսի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

2.5. **Բյուջե**

Ծախսերի բյուջեն կազմվում է նախորդ ժամանակաշրջանի փաստացի կուտակային ծախսերին գումարելով պլանավորումը հաշվետու ժամանակաշրջանի համար՝ ըստ թարմացված գնումների պլանի:

3. **ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌՀԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (SOE & SUMMARY SHEET)**

2021թ. հունիսի 28-ից մինչև 2024թ. Դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի

Հայտի համարը	հայտի հաստատման ամսաթիվը	Ծախսային հոդված	Ընդամենը
		1.Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր ծրագրի շրջանակներում	
		ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
01-AP	08 հուլիսի 2022	75,000.00	75,000.00
02-AP	23 դեկտեմբերի 2022	73,316.71	73,316.71
03-AP	11 հունիսի 2024	60,597.76	60,597.76
05-AP	18 դեկտեմբերի 2024	40,000.00	40,000.00
Ընդամենը		245,914.47	245,914.47

“Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն.
լրացուցիչ ֆինանսավորում” ծրագիր
Դրամաշնորհ No. TFOB4808
Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. հունիսի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

4. Նպատակային հաշվի հաշվետվություն

Հաշվարկային հաշիվ

Բանկ

Հասցե

Արժույթը

900000910506

Կենտրոնական գանձապետարան

Մելիք- Ադամյան 1, Երևան , Հայաստանի Հանրապետություն, 0010

ԱՄՆ դոլար

Դրամաշնորհ No. TFOB4808

	31.12.2022 թ. ավարտվող ժ/շ	31.12.2023թ. ավարտվող տարի	31.12.2024թ. ավարտվող տարի	Ընդամենը
1. Սկզբնական մնացորդ	-	59,210.38	15,946.37	-
2. Ավելացում. սկզբնական անհամապատասխանություն	-	-	-	-
3. ՎՋՄԲ ֆոնդի կանխավճար/համալրում	145,316.71	-	100,597.76	245,914.47
4. Նվազեցում. Նպատակային հաշվից մարում ՎՋՄԲ-ին	-	-	-	-
5. Նպատակային հաշվին համալրված գումարի ներկա մնացորդը	145,316.71	59,210.38	116,544.13	245,914.47
6. Նպատակային հաշվի վերջնական մնացորդը	59,210.38	15,946.37	28,193.09	28,193.09
7. Ավելացում. Վճարված ընդունելի ծախսերի գումար	86,106.33	43,264.01	88,351.04	217,721.38
8. Նվազեցում. Ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են նպատակային հաշիվ)	-	-	-	-
9. Ընդամենը հաշվառված համալրում	145,316.71	59,210.38	116,544.13	245,914.47
10. Տարբերություն (5)-(9)	-	-	-	-

“Հայաստանի արդյունաբերական ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն.
լրացուցիչ ֆինանսավորում” ծրագիր
Դրամաշնորհ No. TFOB4808
Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. հունիսի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

5. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներառում է ակտիվները, պարտավորությունները և Ծրագրի զուտ ակտիվները հաշվետու ամսաթվի դրությամբ: Հաշվետվությունը պատրաստված է հաշվեգրման սկզբունքով, որտեղ գործարքները ճանաչվում են կատարման պահին (այլ ոչ՝ ստացման կամ վճարման պահին):

		31.12.2024 ԱՄՆ դոլար	31.12.2023 ԱՄՆ դոլար	31.12.2022 ԱՄՆ դոլար
ԱԿՏԻՎՆԵՐ				
Դրամական միջոցներ	6	28,193.09	15,946.37	59,210.38
Կանխավճարներ		-	-	-
Ընդամենը ակտիվներ		28,193.09	15,946.37	59,210.38
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Կրեդիտորական պարտավորություններ		-	-	-
Ընդամենը պարտավորություններ		-	-	-
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ				
Աճողական մուտքեր	7			
Դրամաշնորհ No.TFOA6768		245,914.47	145,316.71	145,316.71
Հայաստանի Կառավարություն		39,673.08	25,608.31	16,407.35
		285,587.55	170,925.02	161,724.06
Աճողական ծախսումներ				
Ծրագրի ծախսումներ	8	259,246.56	155,754.66	103,293.83
		259,246.56	155,754.66	103,293.83
Արտարժույթի փոխարժեքային օգուտ/(վնաս)		1,852.10	776.01	780.15
Ընդամենը զուտ ակտիվներ		28,193.09	15,946.37	59,210.38

6. Դրամական միջոցներ

	Բանկ	արժույթը	31.12.2024	31.12.2023	31.12.2022
			ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Ծրագրի հաշիվ (<< Կառավարություն)	Գանձապետարան	<< դրամ	-	-	-
Նպատակային հաշիվ (Դրամաշնորհ No. TFOB4808)	Գանձապետարան	ԱՄՆ դոլար	28,193.09	15,946.37	59,210.38
Ընդամենը			28,193.09	15,946.37	59,210.38

“Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն.
 լրացուցիչ ֆինանսավորում” ծրագիր
 Դրամաշնորհ No. TFOB4808
 Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
 2021թ. հունիսի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

7. Ֆինանսավորում

7.1. Դրամաշնորհ No. TFOB4808

	31.12.2022 ավարտվող ժ/շ	31.12.2023 ավարտվող տարի	31.12.2024 ավարտվող տարի	աճողական առ 18.08.2021
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Կանխավճար / (մարում)	75,000.00	0.00	0.00	75,000.00
SOE և Summary Report	70,316.71	0.00	100,597.76	170,914.47
Ընդամենը	145,316.71	0.00	100,597.76	245,914.47
 Ընդամենը բյուջե Առ 31.12.2024				500,000.00
տրամադրված ֆինանսավորում %				49%

7.2. ՀՀ Կառավարություն

	31.12.2022 ավարտվող ժ/շ	31.12.2023 ավարտվող տարի	31.12.2024 ավարտվող տարի	աճողական առ 18.08.2021
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Ֆինանսավորում	16,407.35	9,200.95	14,064.77	39,673.08
	16,407.35	9,200.95	14,064.77	39,673.08
Ընդամենը բյուջե առ 31.12.2024				107,200.00
տրամադրված ֆինանսավորում %				37%

“Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն.
լրացուցիչ ֆինանսավորում” ծրագիր
Դրամաշնորհ No. TFOB4808
Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. հունիսի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

8. Ծրագրային ծախսեր

8.1. Ծրագրային ծախսերի բաշխումը ըստ ֆոնդերի

Ծախսային հոդված	Դրամաշնորհ No. TFOB4808	ՀՀ Կառավարություն	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
	31.12.2022 ավարտվող ժ/շ		
1.Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր ծրագրի շրջանակներում	86,106.33	17,187.50	103,293.83
Ընդամենը	86,106.33	17,187.50	103,293.83
	31.12.2023 ավարտվող տարի		
1.Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր ծրագրի շրջանակներում	43,264.01	9,196.82	52,460.83
Ընդամենը	43,264.01	9,196.82	52,460.83
	31.12.2024 ավարտվող տարի		
1.Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր ծրագրի շրջանակներում	88,351.04	15,140.86	103,491.90
Ընդամենը	88,351.04	15,140.86	103,491.90
	Աճողական առ 31.12.2024		
1.Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր ծրագրի շրջանակներում	217,721.38	41,525.18	259,246.56
Ընդամենը	217,721.38	41,525.18	259,246.56

“Հայաստանի արդյունաբերական ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն. լրացուցիչ ֆինանսավորում” ծրագիր

Դրամաշնորհ No. TFOB4808

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 2021թ. հունիսի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

8.2. Ծրագրային ծախսերի բյուջեի կապարում

Ծախսային հոդված	Անողական ծախսումներ 31.12.2024թ. դրությամբ	Ընդամենը բյուջե	Կատարում
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	%
1.Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր ծրագրի շրջանակներում	259,246.56	607,200.00	43%
Ընդամենը	259,246.56	607,200.00	43%

Գնման գործընթացում առաջացած խնդիրների պատճառով հնարավոր չի եղել համակարգը ձեռք բերել մինչև ծրագրի ավարտը: Մյուս պատճառը, որի հետևանքով հատկացված միջոցները չեն ծախսվել, այն է, որ ԱՃԹՆ-ի կառավարման խորհրդի նիստը, որը նախատեսված էր մինչև ծրագրի ավարտի օրը՝ 2024 թվականի դեկտեմբերի 31-ը, հետաձգվել է 2025 թվական, ինչի արդյունքում միջոցներն այդ նպատակով չեն օգտագործվել:

9. Ծրագրի ավարտ

Ծրագիրն ավարտվել է 2024թ. դեկտեմբերի 31-ին (Ավարտման ամսաթիվ), և գործարքները ավարտվել են 2025թ. Ապրիլի 18-ին (Հաշվետվության ամսաթիվ):

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ (Ապրիլի 18, 2025թ.).

ա. Ծրագրի ավարտման ամսաթվից հետո այլ ծախսեր, բացի վերջնական աուդիտից, չեն կատարվել, արտոնյալ ժամանակահատվածում վճարումներ չեն կատարվել,

բ. Հաշվետվության ամսաթվից հետո TFOB4808 Դրամաշնորհի գծով առհանումներ չեն կատարվել,

գ. Հաշվետվության ամսաթվից հետո չկան ՀԲ-ին ներկայացված Ծրագրին վերաբերվող ծախսեր,

դ. Հաշվետվության ամսաթվի դրությամբ չկան Ծրագրին առնչվող կանխավճարների և կրեդիտորական պարտքերի մնացորդներ,

ե. Հաշվետու ամսաթվի դրությամբ առկա կանխիկ մնացորդը բաղկացած է հետևյալից՝

- Վճարման ենթակա աուդիտի վճարը՝ 2,400,000 ՀՀ դրամ:

- Նշանակված հաշվին մնացած կանխիկ գումարը՝ 28,193.03 ԱՄՆ դոլար, կվերադարձվի ԱՀԲ-ին (ՎԲ) վերջին աուդիտորական ծառայության վճարումից հետո, որը կազմում է 2,000,000 ՀՀ դրամ (առանց հարկերի) և որը կազմում է մոտավորապես 5,105 ԱՄՆ դոլար (հաշվարկված՝ 09/04/2025թ. ՀՀ ԿԲ միջին փոխարժեքով): 400,000 ՀՀ դրամի չափով հարկերը կվճարվեն ՀՀ կառավարության միջոցներից:

“Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն.
լրացուցիչ ֆինանսավորում” ծրագիր

Դրամաշնորհ No. TFOB4808

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2021թ. հունիսի 28-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

զ. Մենք տեղյակ չենք Ծրագրի դեմ որևէ սպասվող կամ փաստացի դատական հայցի մասին:

**ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑԻՆ
ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՂՐՈՒՄ**

Ծախսային հոդված	Դիմում	Ծրագիր	ՀԲ	Տարբերություն
Կանխավճար / (մարում)	01-AP	75,000.00	75,000.00	-
		75,000	75,000.00	-
1.Ապրանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ, ուսուցում և գործառնական ծախսեր ծրագրի շրջանակներում	02-AP	70,316.71	70,316.71	-
	03-AP	60,597.76	60,597.76	-
	05-AP	40,000.00	40,000.00	-
		170,914.47	170,914.47	-
		245,914.47	245,914.47	-
Ընդամենը		245,914.47	245,914.47	-